ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

29.04.2020 17:53

Նախորդ օրը՝ 28.04.2020թ., ՀՀ արդարադատության նախարարությունը հայտարարությամբ արձագանքել է ՀՀ փաստաբանների պալատի նույն օրվա հաղորդագրությանը, որը վերաբերում էր փաստաբանի լիազորությունների իրականացման ժամանակ նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաև կապված նրա լիազորությունների իրականացման հետ վերջինիս վիրավորելու և զրպարտելու արարքները քրեականացնելու օրենքի նախագիծը Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն չստանալուն:

Մասնավորապես, նախարարությունը հակադարձել է, որ ՀՀ կառավարության ներկայացուցիչ, արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանի կողմից նախագծի դեմ ներկայացված փաստարկները Փաստաբանների պալատի հաղորդագրությամբ ամբողջությամբ չեն ներկայացվել և նույն հայտարարությամբ նախարարությունը շարադրել է իր փաստարկները՝ 3 կետից:

Նախ, հարկ է նկատել, որ Փաստաբանների պալատը հաղորդագրությամբ նպատակ է հետապնդել հայտնել փաստաբաններին և հանրությանը երկու հիմնական տեղեկություն՝

1. վերը նշված **<u>նախագիծը չի ընդունվել</u>**.
2. Կառավարության ներկայացուցիչը առարկել է նախագծի **փաստաբանին վիրավորելու և զրպարտելու** արարքը քրեականացնելու նախաձեռնությանը:

Փաստաբանների պալատի հաղորդագրության մեջ ներկայացվել է նաև նախագծի քննարկման մասնակիցների **<u>ընդհանրական</u>** դիրքորոշումները (հակափաստարկները)՝ նախագծի **<u>առարկված հատվածի</u>** վերաբերյալ:

Արդարադատության նախարարության պարզաբանումների 1-ին կետում որպես փաստաբանների պալատի հաղորդագրության տարընկալում առաջացնելու փաստարկ ներկայացվել է այն, որ կառավարության ներկայացուցիչը դեմ չի եղել օրենսդրական նախագծի՝ փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու և սպառնալու արարքները քրեականացնելուն: Ինչպես հետևում է Փաստաբանների պալատի հաղորդագրությունից, Փաստաբանների պալատը

հակառակը չի պնդել և այդ հարցին չի անդրադարձել այնքանով, որքանով նախագծի ընդունումը մերժվել է, իսկ մերժման պատճառը հանդիսացել է փաստաբաններին վիրավորելու և զրպարտելու արարքները քրեականացնելու նախագծի մասի հետ անհամաձայնությունը:

Փաստաբանների պալատի հաղորդագրությամբ նշվել էր, որ արդարադատության նախարարի տեղակալի առարկության հիմնական փաստարկը կայանում էր նրանում, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2007թ. հոկտեմբերի 4-ի 1577(2007) բանաձևի համաձայն պետք է ապաքրեականացվեն զրպարտանքը և վիրավորանքը:

Նշված ընդհանրացումը որակելով որպես տարընկալում առաջացնող՝ դրան զուգահեռ Արդարադատության նախարարության հայտարարության մեջ ներկայացված պարզաբանումների մյուս երկու փաստարկների հիմքում մի դեպքում ուղղակիորեն, մյուս դեպքում անուղղակիորեն դրել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի պահանջները: Մասնավորապես, 2-րդ կետում անմիջականորեն վկայակոչվել է նշված բանաձևը և որպես առարկության փաստարկ նշվել, որ եվրոպական երկրները, փոփոխելով իրենց վարած քրեական քաղաքականությունը, հրաժարվել են զրպարտության դեպքերին քրեաիրավական հարթությունում արձագանքելու գործիքակազմից: Որպես հակափաստարկ նշելով, որ այլ սուբյեկտների նկատմամբ զրպարտելու համար քրեական պատասխանատվություն նախատեսված լինելը ինքնին չի հիմնավորում դրա գոյության անհրաժեշտությունը նաև փաստաբանների մասով, 3-րդ կետում ներկայացված փաստարկը նախարարությունն ի վերջո ամփոփում է այն պնդմամբ, որ քրեական նոր օրենսգրքի նախագծով որևէ սուբյեկտի նկատմամբ զրպարտության համար քրեական պատասխանատվություն չի նախատեսվել՝ որպես հիմք հղում կատարելով Եվրոպայի խորհրդի փորձագետների ուղղակի պահանջներին: Պետք է փաստել, որ նախարարության պարզաբանումների 3-րդ կետի փաստարկի առանցքում այն պնդումն է, որ պետության քաղաքականությունը զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացումն է, որը բխում է Եվրոպայի խորհրդի առաջ պետության ստանձնած պարտավորություններից:

Ամփոփելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ կառավարության ներկայացուցչի դիրքորոշումը՝ փաստաբանին վիրավորելու և զրպարտելու արարքը քրեականացնելու վերաբերյալ, Փաստաբանների

պալատի հաղորդագրությամբ ընդհանրացվել է բարեխղճորեն, ուստի Արդարադատության նախարարության «մեղադրանքները» կատարված ընդհանրացման տարընկալում առաջացնելու վերաբերյալ ընդունելի չեն:

Անկախ հաղորդագրությունների և դիրքորոշումների տարընկալումներից և տարբերություններից, Փաստաբանների պալատը հույս է հայտնում, որ փաստաբանությանն առնչվող հարցերում Կառավարությունը բացասական նախատրամադրվածություն չունի և շահագրգիռ է Հայաստանում անկախ փաստաբանական ինտիտուտի զարգացման հարցում:

Հ.Գ. Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք պետություններում այս պահին էլ վիրավորանքը և զրպարտությունը քրեականացված են (մասնավորապես՝ Գերմանիա, Իտալիա, Լատվիա, Սլովակիա), իսկ որոշ երկրներում քրեականացված են հատկապես փաստաբաններին վիրավորելու (զրպարտելու) արարքները՝ Պորտուգալիա, Ալբանիա, Մալթա):

Առդիր՝ Կառավարության ներկայացուցչի ելույթից հատվածների սղագրությունը՝ ամբողջական տեսանյութի հղումով:

Բեռնել սղագրությունը

Արդարդատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանի 27.04.2020թ Ազգային ժողովում հայտնած դիրքորոշման ամբողջական տեսագրությունը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })